

Հաստատված է  
ԵՄԽՀ-ի գիտական խորհրդի  
„\_\_\_\_\_” 20 թ, նիստ \_N\_\_\_\_  
Գիտխորհրդի նախագահ՝ Ա.Ս.Աղաբաբյան  
„\_\_\_\_\_” 20 թ

**ԵՄԽՀ-Ի ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ  
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն փաստաթղթով սահմանվում է ԵՄԽՀ-ի ֆինանսական քաղաքականությունը որակի ներքին ապահովման գործընթացների համար, այդ գործընթացների ֆինանսավորման մեխանիզմները, ֆինանսական հարաբերությունների կարգավորումը մասնակից կողմերի միջև : Այն հիմնված է ԵՄԽՀ-ի կանոնադրության և ռազմավարական ծրագրի պահանջների վրա և ֆինանսական շահ չի հետապնդում: ԵՄԽՀ ֆինանսական քաղաքականության համար պատասխանատու է համալսարանի ռեկտորը:

***Ֆինանսական քաղաքականության նպատակներն են.***

- ❖ Ֆինանսապես ապահովել ԵՄԽՀ որակի ներքին ապահովման գործընթացներն իրականացնող ստորաբաժանման գործունեությունը:
- ❖ Նպաստել համալսարանի ֆինանսների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը:
- ❖ Ներդնել և մշտապես բարելավել ԵՄԽՀ որակի ներքին ապահովման գործընթացներն իրականացնող ստորաբաժանման և տարբեր հանձնախմբերի գործունեության առանձնահատկություններին համարժեք ֆինանսական ապահովման մեխանիզմներ:

***Ֆինանսական քաղաքականության հիմնական խնդիրներն են.***

- ❖ Հաշվարկել որակի ներքին ապահովման գործընթացներին անհրաժեշտ ֆինանսական միջոցները և ապահովել հոսքը:
- ❖ Իրականացնել նախատեսված ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարումը:
- ❖ Կարգավորել որակի ներքին ապահովման գործընթացների մասնակիցների ֆինանսական հարաբերությունները:

***Որակի ներքին ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման մեխանիզմներն են.***

- ❖ Որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման համար նախատեսված ֆինանսական միջոցները տրամադրվում է ԵՄԽՀ-ի բյուջետային միջոցներից:
- ❖ Համալսարանի տարեկան բյուջեում որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման ծախսերի համար առանձնացվում է հատուկ տող:
- ❖ Գործընթացներին անհրաժեշտ ֆինանսական նախահաշիվը, ԵՄԽՀ որակի կառավարման հանձնաժողովում քննարկելուց հետո, ստորաբաժանման ղեկավարը ներկայացնում է համալսարանի ռեկտորին՝ բյուջեի նախագծում ներառելու համար:
- ❖ Չնախատեսված ծախսերի առկայության դեպքում ( վերապատրաստումներ, խորհրդատվություն, հրատարակություններ, կլոր-սեղաններ, այցելություններ, գործուղումներ և այլն ) ԵՄԽՀ որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարը գրավոր դիմում է ներկայացնում համալսարանի ռեկտորին:
- ❖ Որակի ներքին ապահովման գործընթացներում այլ մասնակիցներ ընդգրկելու դեպքում համալսարանը վերջիններիս հետ կնքում է վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր:
- ❖ Ֆինանսական միջոցների ծախսերի և քաղաքականության իրականացման վերաբերյալ որակի ապահովման ստորաբաժանման ղեկավարը հաշվետվություն է ներկայացնում ռեկտորին, որը ներառվում է ռեկտորի տարեկան հաշվետվության մեջ և հրապարակվում է համալսարանի պաշտոնական էլեկտոնային կայքում: